



Բովանդակություն

Խորհրդանիշը.....	5
Հեղինակների կողմից	7
Նոր մենեջեր «Մեկ թուպեի» պատմությունը	
Փնտրտույքը	9
Նոր մենեջեր «Մեկ թուպե».....	13
Գաղտնիք առաջին. մեկրոպեանոց նպատակներ	21
Մեկրոպեանոց նպատակներ. ամփոփում	29
Գաղտնիք երկրորդ. մեկրոպեանոց գովեստներ	31
Մեկրոպեանոց գովեստներ. ամփոփում	39
Գնահատումը	42
Գաղտնիք երրորդ. մեկրոպեանոց վերաուղղորդումներ...44	
Մեկրոպեանոց վերաուղղորդումներ. ամփոփում	52
Նոր մենեջեր «Մեկ թուպե» բացատրում է	54
Ինչո՞ւ են մեկրոպեանոց նպատակներն աշխատում.....	59
Ինչո՞ւ են մեկրոպեանոց գովեստներն աշխատում.....	69
Ինչո՞ւ են մեկրոպեանոց վերաուղղորդումներն աշխատում	74
Մեկ այլ մենեջեր «Մեկ թուպե»	87
Նոր մենեջեր «Մեկ թուպեի» խաղի նախագիծը	89
Նվեր ինքդ քեզ	90
Նվեր ուրիշներին.....	93
Երախտագիտություն	96
Հեղինակների մասին.....	98



Հեղինակների կողմից

«Մենեջեր «Մեկ թուպեն»» գրքի առաջին տարրերակի հրատարակումից հետո աշխարհը փոխվել է: Այսօր ձեռնարկությունները, անկախ ռեսուրսների սակավությունից, պետք է կարողանան ավելի արագ արձագանքել, որպեսզի շարժվեն անընդհատ փոփոխվող տեխնոլոգիաներին և գլոբալացմանը համընթաց:

Ուրախ ենք ձեզ առաջարկել «Նոր՝ մենեջեր «Մեկ թուպեն»» գիրքը, որը կօգնի ձեզ առաջնորդել, ղեկավարել և հաջողություն ունենալ այս փոփոխվող աշխարհում:

Քանի որ արդեն իսկ դասական դարձած այս պատմության հիմքում ընկած սկզբունքները մնում են նույնը (և օգնել են միլիոնավոր մարդկանց ողջ աշխարհում), պատմությունն այս գրքում ևս հիմնականում նույնն է մնացել:

Սակայն, ինչպես աշխարհն է փոխվել, այդպես էլ պարոն «Մեկ թուպեն»: Նա ունի մարդկանց առաջնորդելու և մոտիվացնելու հետ կապված նոր՝ ավելի համազործակցային մոտեցում:

Այն ժամանակ, երբ նա սկսեց պատմել իր երեք գաղտնիքները, ուղղահայաց ղեկավարումը ընդունված կենսակերպ էր:

Այժմ արդյունավետ ղեկավարումը ավելի շատ հորիզոնական հարաբերություն է: Դուք կտեսնեք, որ դա իր արտա-

հայտությունն է գտել նոր մենեջերի գործելակերպում:

Այսօր մարդիկ ձգտում են հնարավորինս լիարժեք ինքնաիրացվել աշխատանքում և կյանքում: Նրանք ցանկանում են լինել ներգրավված և ունենալ իմաստալից ներդրում: Հակված են ավելի քիչ ժամանակ ծախսելու աշխատանքի վրա, որպեսզի բավարարեն իրենց կարիքները աշխատանքից դուրս:

Նոր մենեջերը հասկանում է սա և համապատասխանաբար է վերաբերվում մարդկանց՝ իմանալով, որ նրանք ձեռնարկության հաջողության գլխավոր գործոններից են: Նա գիտակցում է, որ տաղանդներին ներգրավելը և նրանց պահելը առաջնահերթություն է:

Սակայն ինչպե՞ս է օգտագործում իր նոր մոտեցումը:

Հին աշխարհի իմաստուն Կոնֆուցիոսն ասում է. «Գիտելիքի էությունը ոչ միայն այն ունենալն է, այլ նաև օգտագործել կարողանալը»:

Հուսով ենք՝ հաշվի կառնեք այն երեք գաղտնիքները, որ կրացահայտեք «Նոր՝ մենեջեր «Մեկ րոպեն»» գրքում և կօգտագործեք դրանք ձեր փոփոխվող աշխարհում հաջողության հասնելու համար. ընդ որում՝ ոչ միայն գործընկերների հետ աշխատանքային հարաբերություններում, այլ նաև ձեր ընտանիքում և ընկերական շրջապատում:

Եթե այդպես վարվեք, ապա մենք վստահ ենք, որ դուք և այն մարդիկ, ում հետ ապրում և աշխատում եք, կվայելեք ավելի առողջ, երջանիկ և արդյունավետ կյանք:

***Քեն Բլանչարդ,**
փիլիսոփայական գիտությունների դոկտոր
Սպենսեր Ջոնսոն,
թժշկական գիտությունների դոկտոր*

Մի պահ դադար փոքր
Եվ հայացք գցիր նպատակներիդ:

Հեղո նայիր,
Թե ինչ ես անում:

Տես՝ արդյոք դա
Համապատասխանում է նպատակներիդ:



Նոր մենեջեր «Մեկ րոպեի» խաղի նախագիծը

Սկիզբ

Թող որ մարդիկ հստակորեն իմանան, թե ինչ եք պատրաստվում անել, որ օգնեք նրանց հաղթել:



ՄԵԿՐՈՊԵՆՆՈՑ ՆՊԱՏԱՆԵՐԸ

- Հստակեցրեք նպատակները:
- Տեսնե՞ք, թե ինչ բան է լավ վարքագիծը:
- Շարժողքը յուրաքանչյուր նպատակը մեկ էջի վրա:
- Համախափի արագ վերանայնք նպատակները:
- Քննաչափերը մարդկանց, որ նկատեն, թե ինչ են անում և տեսնեն՝ արդյո՞ք դա համապատասխանում է իրենց նպատակներին:
- Եթե ոչ, ապա հորդորեք նրանց, որ փոխեն այն, ինչ անում են, և հաղթեն:

Եթե հասել են նպատակին (կամ նպատակի որևէ հատվածին),

ԳՈՒՐ ՀԱՂԹԵԼ ԵՔ:

Եթե չեն հասել նպատակին,

ԳՈՒՐ ՊԱՐՏՎԵԼ ԵՔ:

Ձեզ կօգնեն հաղթել



ՄԵԿՐՈՊԵՆՆՈՑ ԳՈՒՐՍՆԵՐԸ

- Գովե՞ք վարքագիծը:
- Մի՞ հապաղեք դա անել: Եղեր հնարավորինս որոշակի:
- Ասե՛ք, թե որքան լավ եք զգում այդ պատճառով:
- Դադար տվե՛ք՝ մարդկանց ժամանակ տալով, որ իրենք էլ իրենց լավ զգան:
- Քննաչափերը նրանց, որ շարունակեն նույն ոգով:

Շարունակե՛ք՝ ձգտելով առավել հաջողության:



ՄԵԿՐՈՊԵՆՆՈՑ ՎԵՐԱՌՎՈՐԳՈՒՄՆԵՐԸ

- Կրկին հստակեցրեք և համաձայնեցրեք նպատակները:
- Վավերացրեք տեղի ունեցածը:
- Ամիջապես ցույց տվե՛ք սխալը:
- Ասացե՛ք, թե որքան մտահոգ եք:
- Դադար տվե՛ք՝ հնարավորություն տալով, որ մարդիկ նույնպես մտահոգվեն:
- Ասացե՛ք նրանց, որ ավելի լավն են, քան սխալը, և որ արժեքտրոմ եք նրանց:
- Երբ վերաուղղորդումն ավարտվում է, այն վերջնականապես է ավարտվում:

Շարունակե՛ք՝ ձգտելով ավելի լավ կատարողականության: